և սրածութիւնք՝ մէկ սոմար ալերն թ. խուրուշ ելաւ ի Կարս քաղաք՝ բայց Աստուածասէր և հիւրընկալ բարեմիտ և ողորմած ի տուրս տնանկաց Խաչա Սաւարն յիշեցէք ի Քրիստոս՝ որ ստացաւ Սուրբ Աւետարանս յիշատակ և կողակցոյն իւրոյ Փաշաճանին՝ և որդւոցն Գասպարին և Մելքոնին և դստերացն Մարիամին և Շահիճանին և եղբարցն Մալիճանին և կենակցին Զուլքանին և դստերացն Հռիփսիմէին և Պէկզատին և հանգուցեալ եղբարցն Աղիճանին՝ Ալթունին և ծնողացն և հաւրն Աստուածատրին և մաւրն Կուլշատին և ամենայն արեան մերձաւորացն՝ որ առ Քրիստոս են հանգուցեալ՝ ամէն՝ Ով յիշէ՝ յիշեալ լիցի առ Աստուած հայրն մերոյ»։

ՄԱՐԿՈՍԻ ՎԵՐՋԸ.—«Քրիստոս Աստուած ողորմեաց երկուց եղբարց պատուական քահանայից Գրիգորայ և Վարդանայ ստացողի Ս. Աւետարանիս»։

«Զվերջին ստացող Ս. Աւետարանիս զՏէր Եղիա՝ ի գերութեան էր մատնեալ. ետ առի հալալ արդեանց իմոց ետու յիշատակ հոգւոյ իմոյ և հաւր իմում Մարտիրոսին և Մաւրն իմոյ Ճումլիին և եղբաւր իմոյ Մէջլիսին և եղբայր որդւոյս իմոյ Հայրապետ աբեղային և փոխեցելոյն առ Քրիստոս Պաստամայն և ալ ամենայն մերձաւորաց իմ հայրական աբեղայի Վարդան սարկաւագին՝ ամէն . . .»։

«Եւ այլ աղաչեմք զՀանդիպողք Ս. Աւետարանիս կարդալով կամ գաղափար առնելով յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր վերոյ գրեալս և Աստուած զձեզ յիշէ իւր միւս անգամ գալստեանն ամէն։ Զգծող սակաւ յիշատակարանիս զՍարգիս եպիսկոպոս որդի պարոն Պաստամին յիշել աղաչեմ ի Տէր և յիշողացդ Տէրն ողորմեաց և նմա փառք անլռելի։

ՂՈՒԿԱՍԻ ՎԵՐՋԸ.—Երկուք եղբարք պատուականք և ընտրեալք քահանայք՝ որ ստացան զՍ. Աւետարանս ի հալալ ընչից իւրեանց յիշատակ իւրեանց և ծնողաց իւրեանց Վարդան և Գրիգոր որդիք Ղումաշին Քրիստոս Աստուած ողորմի նոցա իւրում գալստեան ամէն . . .»։

«Յորժամ տեսայ զԿարմիր Աւետարան՝ կամ՝ցայ ընթեռ-